ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՄԵԿ ԱՆՁԻՑ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ, ԳՆՈՒՄԸ, ԱՌԱՆՑ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՑ ՄԵԿԻ ԿԱՄ ՄԻ ՔԱՆԻՍԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ, ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գլխավոր տեղեկություն

Համար	N 450-Ա
Տիպ	Որոշում
Ակտի տիպ	Հիմնական ակտ
Կարգավիճակ	Գործում է (10.04.2026-մինչ օրս)
Սկզբնաղբյուր	Հրապարակվել է միասնական կայքում
Ընդունող մարմին	ՀՀ կառավարություն
Ընդունման ամսաթիվ	09.04.2026
Ստորագրող մարմին	ՀՀ վարչապետ
Ստորագրման ամսաթիվ	09.04.2026
Ուժի մեջ մտնելու ամսաթիվ	10.04.2026

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

9 ապրիլի 2026 թվականի N 450-Ա

ՄԵԿ ԱՆՁԻՑ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ, ԳՆՈՒՄԸ, ԱՌԱՆՑ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՑ ՄԵԿԻ ԿԱՄ ՄԻ ՔԱՆԻՍԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ, ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված՝ գնումների գործընթացի կազմակերպման կարգի 3-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Թույլատրել Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությանը Հայաստանի Հանրապետությունում իրականացվելիք՝ ստրատեգիական նշանակության արհեստական բանականության գործարան կառուցելու ծրագրի իրականացման շրջանակներում առաջատար գրաֆիկական պրոցեսորների հզորությունը ձեռք բերել մեկ անձից գնման ձևով՝ հատուկ և բացառիկ իրավունքի առկայությամբ պայմանավորված՝ «Ֆայրբըրդ ԷյԱյ» փակ բաժնետիրական ընկերությունից (գրանցման համար՝ 264.120.1470904, ՀՎՀՀ՝ 08303908)՝ հինգ տարի ժամկետով:

2. Սահմանել, որ «Ֆայրբըրդ ԷյԱյ» ընկերությունից ծառայությունների գնման գործընթացի շրջանակում պայմանագրին ներկայացվող հիմնական պայմանները սահմանվում են գնման հայտով:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ **Ն. Փաշինյան**

Երևան

09.04.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Փոփոխման պատմություն

Փոփոխող ակտ	Համապատասխան ինկորպորացիան

Փոփոխված ակտ

Փոփոխող ակտ	Համապատասխան ինկորպորացիան